# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀՈՂԻ ~~ՀԱՐԿԻ~~ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀՈԴՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ~~ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ~~ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքները 1994 թվականից ազատվում են հողի հարկից, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ անշարժ գույքի հարկից:

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար հողի հարկ վճարողներն ազատվում են 1994 թվականի և հետագա տարիների համար հաշվարկված հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված տույժերից: